

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----- 2021թ.

N ---- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը. Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10 որոշման որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման N 2 հավելվածում՝

ա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հ/հ	Հաստիքների անվանումը	Հաստիքների քանակը
-	Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն	
1.	վարչության պետ	1
2.	վարչության պետի տեղակալ	2
3.	գլխավոր մասնագետ	4
4.	գործավար	1
	Քաղաքաշինական փաստաթղթերի ձևակերպման տարածքային առաջին բաժին	
5.	Բաժնի պետ	1
6.	գլխավոր մասնագետ	4

7.	առաջատար մասնագետ	~
8.	առաջին կարգի մասնագետ	1
	Քաղաքաշինական փաստաթղթերի ձևակերպման տարածքային երկրորդ բաժին	
9.	Բաժնի պետ	1
10.	գլխավոր մասնագետ	4
11.	առաջատար մասնագետ	2
12.	առաջին կարգի մասնագետ	1
	Կարգավիճակ չունեցող գույքերի բաժին	
13.	բաժնի պետ	1
14.	գլխավոր մասնագետ	4
15.	առաջատար մասնագետ	5
16.	առաջին կարգի մասնագետ	5
	Համակարգման և տեղեկատվության ապահովման բաժին	
17.	Բաժնի պետ	1
18.	գլխավոր մասնագետ	2
19.	առաջատար մասնագետ	2
20.	առաջին կարգի մասնագետ	4
	Ինժեներական ենթակառուցվածքների բաժին	
21.	բաժնի պետ	1
22.	գլխավոր մասնագետ	2
23.	առաջատար մասնագետ	1
24.	առաջին կարգի մասնագետ	1
	Հողօգտագործման և հողհատկացման տարածքային առաջին բաժին	
25.	բաժնի պետ	1
26.	գլխավոր մասնագետ	4
27.	առաջատար մասնագետ	2
28.	առաջին կարգի մասնագետ	1
	Հողօգտագործման և հողհատկացման տարածքային երկրորդ բաժին	
29.	բաժնի պետ	1
30.	գլխավոր մասնագետ	4

31.	առաջատար մասնագետ	~
32.	առաջին կարգի մասնագետ	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	69

բ. «Լ.Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

-	Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին	
1.	բաժնի պետ	1
2.	բաժնի պետի տեղակալ	1
3.	գլխավոր մասնագետ	12
4.	առաջատար մասնագետ	5
5.	առաջին կարգի մասնագետ	1
6.	գործավար	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	21

2. Սույն որոշմամբ նախատեսվող հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափերը սահմանվում են Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշմամբ նախատեսված ամսական պաշտոնային դրույքաչափերին համապատասխան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29-ի N10-Ա** որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի /այսուհետև՝ նախագիծ/ ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Նախագծով առաջարկվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության ներքին կառուցվածքում կատարել փոփոխություն՝ հաստիքային միավորների թվաքանակի ավելացմամբ, իսկ աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնում՝ հաստիքային միավորների ավելացմամբ:

2018 թվականից հետո ընկած ժամանակահատվածում մուտքագրված փաստաթղթերի կտրուկ աճով պայմանավորված ստորաբաժանումները ի գործու չեն ներկայիս կառուցվածքով և հաստիքային միավորների թվաքանակով կանոնադրական գործառույթներն իրականացնել արդյունավետորեն և «Մեկ պատուհան» սկզբունքի կիրառմամբ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում մատուցել առավել որակյալ ծառայություններ: Դիմումների և գրությունների մեծաթիվ քանակը **2021**թվականին պայմանավորված է հատկապես «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ:

Ստորաբաժանումների կանոնադրական գործառույթներն հնարավոր է իրականացնել դրանց կառավարման և ղեկավարման արդյունավետությունը բարձրացնելու, աշխատանքային ծանրաբեռնվածությունը հավասարաչափ բաշխելու, իրականացվող գործառույթների կրկնությունները բացառելու, համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերում տարբերակված և առանձնահատկությունները սահմանող գործառույթների ամրագրմամբ համակարգված և մասնագիտացված գործունեություն իրականացնելու և համապատասխան բաժիններում աշխատակիցների փոխատեղումներ կատարելու միջոցով:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունն ապահովում է քաղաքաշինության բնագավառում Երևանի քաղաքապետին օրենքով վերապահված լիազորությունների իրականացումը, որի մեջ է մտնում նաև Երևան քաղաքի ավագանու, Երևանի քաղաքապետի որոշումների նախագծերի նախապատրաստում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան վարչական վարույթի իրականացման ապահովումը: Հաճախ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունն իր գործառույթներից բխող յուրաքանչյուր գործի կարգավորմանն ուղղված աշխատանքների իրականացման ընթացքում բախվում է որոշակի իրավական խնդիրների, որոնց պարզաբանման համար ստիպված է լինում կատարել լրացուցիչ աշխատանք և պարզաբանման համար դիմել աշխատակազմի իրավաբանական վարչություն: Բացի այդ, շատ են լինում դեպքեր, երբ հարուցված վարչական վարույթի արդյունքում նշանակված լսումներին անհրաժեշտություն է առաջանում ներգրավել նաև իրավաբանական վարչության աշխատակիցներին: Իրավաբան մասնագետների կարիքը Վարչությունը անհրաժեշտ է նաև քաղաքաշինության բնագավառը կարգավորող օրենքների և այլ ենթաօրենսդրական ակտերի փոփոխման կամ նոր ակտերի ընդունման նախագծերի մշակման գործընթացում:

Մինչդեռ, վերը թվարկված յուրաքանչյուր դեպքով, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր պարզաբանումներ ստանալու համար Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչությանը դիմելը և աշխատատար է, և ժամանակատար, որն ինչպես Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և

քաղաքաշինության վարչության աշխատանքային ծախսաբաշխման վարչությանը սլաքով, այսպես էլ օրենքներով և այլ իրավական ակտերով կոնկրետ գործընթացի համար սահմանված ժամկետներում խնդրի կարգավորումն ապահովելու հարցում, անարդյունավետ է:

Անհրաժեշտ է նաև աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնում տարիների ընթացքում կուտակված քաղաքաշինական ուղորտին առնչվող տարատեսակ խնդիրների, դիմում-բողոքների քննարկումը առանձնացնել քաղաքաշինական փաստաթղթեր մշակող աշխատակիցների գործառնություններից՝ կառուցապատման բարձր ռիսկայնության IV-րդ կատեգորիայի խոշոր օբյեկտների կառուցման հայտերի արդյունավետ ընթացքը ապահովելու համար:

Նախագծով առաջարկվում են հետևյալ փոփոխությունները.

- աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության թվով **57** հաստիքային միավորների թվաքանակը ավելացնել **12** հաստիքային միավորով,

- աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության ներկայիս հաստիքացուցակում ներառված **5** հաստիքային միավոր զբաղեցնող անձինք տեղափոխել քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին, որտեղ նրանք փաստացի իրականացնում են աշխատանքային գործունեություն,

-աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի թվով **7** հաստիքների միավորների թվաքանակը ավելացնել **14** հաստիքային միավորով՝ այդ թվում աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տեղափոխվող հաստիքային միավորները (բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ, **12** գլխավոր, **5** առաջատար, **1** առաջին կարգի մասնագետ և **1** գործավար),

-աշխատակիցների փոխատեղումների արդյունքում՝ աշխատակցի կողմից իրականացվող փաստացի աշխատանքը համապատասխանեցնել վերակազմակերպվող բաժինների գործառնություններին:

- «Քաղաքաշինական փաստաթղթերի ձևակերպման» բաժինը վերանվանել «Քաղաքաշինական փաստաթղթերի ձևակերպման տարածքային առաջին» բաժին:

- «Կառուցապատման ծրագրերի մշակման և ձևակերպման» բաժինը վերանվանել «Քաղաքաշինական փաստաթղթերի ձևակերպման տարածքային երկրորդ» բաժին:

Վերը նշված երկու բաժինների վերանվանման և ձևափոխման նպատակը քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրման գծով վարչության պետի տեղակալի սահմանված գործառնությունների օպտիմալ և արդյունավետ կազմակերպումն է՝ ընդունված դիմում-հայտերի քննարկման և քաղաքաշինական փաստաթղթերի ձևակերպման, որոշման նախագծերի պատրաստման՝ աշխատակիցների միջև հավասարաչափ վերաբաշխման համար:

- «Կարգավիճակ չունեցող շենքերի ու շինությունների և դրանցով ծանրաբեռնված հողամասերի ուսումնասիրման ու փաստաթղթերի ձևակերպման բաժինը վերանվանել «Կարգավիճակ չունեցող գույքերի» բաժնի,

- «Քաղաքաշինական վերլուծությունների և տեղեկատվության ապահովման բաժինը» վերանվանել «Համակարգման և տեղեկատվության ապահովման» բաժնի, որի գործառնությոը հիմնականում քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից ստացված դիմումների և գրությունների, ինչպես նաև ներքին փաստաթղթաշրջանառության կազմակերպումն է, փաստաթղթերի արխիվացումը, ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն ստացված հեռախոսազանգերին արագ արձագանքումը:

- Պահպանել «Ինժեներական ենթակառուցվածքների» անվանմամբ բաժինը,

- «Հողհատկացման և հողօգտագործման» բաժինը վերանվանել և բաժանել «Հողհատկացման և հողօգտագործման տարածքային երկրորդ» բաժինների:

Վերը նշված երկու բաժինների վերանվանման և ձևափոխման նպատակը հողհատկացման և հողօգտագործման գծով վարչության պետի տեղակալի սահմանված գործառնությունների օպտիմալ և արդյունավետ կազմակերպումն է՝ ընդունված դիմում-հայտերի

քառալիցա, սյուսաարիլով կառուարթլթվի, որոշաա սարազարի պատլաասաա աշխատակիցների միջև հավասարաչափ վերաբաշխման համար:

Արդյունքում ճարտարապետության և քաղաքաշինության վարչության ներկայիս 6 բաժինները վերանվանվում են հետևյալ անվանումներով 7 բաժինների (սխեմատիկ տարբերակը կցվում է), դրանք են.

- Քաղաքաշինական փաստաթղթերի ձևակերպման տարածքային առաջին բաժին (բաժնի պետ, 4 գլխավոր, 2 առաջատար և 1 առաջին կարգի մասնագետ),
- Քաղաքաշինական փաստաթղթերի ձևակերպման տարածքային երկրորդ բաժին (բաժնի պետ, 4 գլխավոր, 2 առաջատար և 1 առաջին կարգի մասնագետ),
- Կարգավիճակ չունեցող գույքերի բաժին (բաժնի պետ, 4 գլխավոր, 5 առաջատար և 5 առաջին կարգի մասնագետ),
- Համակարգման և տեղեկատվության ապահովման բաժին (բաժնի պետ, 4 գլխավոր, 2 առաջատար և 2 առաջին կարգի մասնագետ),
- Ինժեներական ենթակառուցվածքների բաժին (բաժնի պետ, 2 գլխավոր, 1 առաջատար և 1 առաջին կարգի մասնագետ),
- Հողհատկացման և հողօգտագործման տարածքային առաջին բաժին (բաժնի պետ, 4 գլխավոր, 2 առաջատար և 1 առաջին կարգի մասնագետ),
- Հողհատկացման և հողօգտագործման տարածքային երկրորդ բաժին (բաժնի պետ, 4 գլխավոր, 2 առաջատար և 1 առաջին կարգի մասնագետ):

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՅԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ